ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. հոկտեմբերի 13-ին Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների մասին

1. <u>Անունը, ազգանունը՝</u>

Արմեն Սիմոնյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2023թ. հոկտեմբերի 13, Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել)

4. <u>Հրավիրող կողմը.</u>

Եվրոպական միության արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն (ԱԳԵԾ):

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>

Մասնակցել ՀՀ-ԵՄ էներգետիկայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, կլիմայի գործողության և քաղաքացիական պաշտպանության հարցերով ենթակոմիտեի հերթական նիստին

6. <u>Քննարկված թեմաները.</u>

Քննարկվել է CEPA (ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերություն) համաձայնագրով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը:

Քննարկվել է նաև ՀՀ և ԵՄ միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի վարչական կիրառումը ՀՀ կողմից: Այս համատեքստում ընդգծվել են ՀՀ ավիացիոն իշխանությունների կողմից ԵՄ նորմերի և ստանդարտների ՀՀ օրենսդրության մեջ ներդնելու կապակցությամբ կատարված աշխատանքները: Ինչպես նաև ՀՀ ավիաընկերությունների EASA անվտանգության ցուցակից դուրս գալու հնարավորությունը:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Միջոցառումների ընթացքում քննարկվել են օրակարգում ընդգրկված հետևյալ բնագավառների (տրանսպորտ, բնապահպանություն, էներգետիկա և միջուկային անվտանգություն, քաղաքացիական պաշտպանություն) ԵՄ հետ երկկողմ համագործակցության բազմաթիվ հարցեր:

Հայկական կողմը ներկայացրել է Հայաստանում վերոնշյալ բնագավառների վերջին զարգացումները: ԵՄ ներկայացուցիչները ներկայացրել են համագործակցության հնարավոր զարգացումները, տարածաշրջանային ծրագրերը:

Քննարկվել են նաև ՀՀ-ում և ԵՄ-ում տրանսպորտի ոլորտի վերջին զարգացումների, տրանսպորտի ոլորտում տարածաշրջանային համագործակցության, ավիացիային առնչվող հարցեր, ինչպես նաև ԵՄ կողմից ակնկալվող աջակցության հարցերը:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Ստորգրված փաստաթղթեր չկան:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

DG MOVE-ի ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն մոտ ժամանակներում կազմակերպել առանձին քննարկումներ՝ կապված Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի վարչական կիրառության, ինչպես նաև ՀՀ ավիաընկերությունների EASA անվտանգության ցուցակից դուրս բերելու ուղղությամբ:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

19.10.2023